C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

No. 26

25.12.2024

2024-2025 ուստարվա մեկնարկը տրված է...

Տոնական այս օրը հատկապես առանձնակի ջերմությամբ անցկացվեց ՍԵՊՖԱ-ում: Շնորհավորանքները ուղղված էին բոլորին, հատկապես նրանց, ովքեր առաջին անգամ էին ոտք դնում ուսումնական հաստատություն: Մաղթանքներից գլխավորն այն էր, որ այս սեպտեմբերի 1-ը դառնա լուսավոր ու մեծ ճանապարհի սկիզբը: Հաստատության շրջանավարտներն ու ուսանողները ներկայացրին իրենց գրանցած հաջողությունները տարբեր ոլորտներում, առաջին կուրսեցիներին մաղթեցին, որ իրենց օրինակը վարակիչ լինի: Ժամանակակից աշխարհում բանիմաց ու բարեխիղճ մասնագետը պետության հարստությունն է և մարդու կարևորագույն ու մշտական կապիտալը եղել և մնում է գիտելիքը:

160 - ամյա տարեդարձը՝ նոր նվաճումների սկիզբ

ՍԵՊՌ-ն իր 160 տարիների ընթացքում մարմնավորել է գերազանցության, նվիրվածության և նորարարության իդեալները մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում՝ երիտասարդների համար ճանապարհ հարթելով դեպի կայուն ապագա: ՍԵՊՌ-ի և ՍԵՊՖԱ-ի միջև պատմական համագործակցությունը մշտապես հպարտության աղբյուր է եղել մեզ համար: Միասնական ջանքերով կառուցվել են ամուր կամուրջներ, որոնք նպաստել են գիտելիքների և արժեքների փոխանակմանը, ինչպես նաև երիտասարդ տաղանդների համար հնարավորությունների ստեղծմանը:

ՍԵՊՖԱ-ի ՀԽ նախագահ Քրիստիան Դրոզի նվիրվածության և արդյունավետ ղեկավարման շնորհիվ ուսումնական կենտրոնն ամրապնդել է իր դիրքը որպես մասնագիտական կրթության և ուսուցման առանցքային դերակատար:

Անգնահատելի են մասնագիտական կրթության ընկերության գլխավոր տնօրեն Վերնիկ Ֆյուրլանի բացառիկ նվիրվածությունն ու ջանքերը, որոնք նա ներդրել է Հայաստանում և մասնավորապես ՍԵՊՖԱ-ում՝ մասնագիտական կրթության զարգացման նպատակով

Վերջինս արժանացել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ոսկե մեդալին, որի հանձնման պատիվը վերապահված էր Լիոնում Հայաստանի հյուպատոս տիկին Նարինե Նիկոլյանին: Վստահ ենք, որ ՍԵՊՌ-ի նոր տնօրեն տիկին Օրիան Ռենոն ևս ջանք չի խնայի և հետագա համագործակցությունն էլ ավելի կամրապնդվի:

Տարածաշրջանային մոտեցումներ կարիերայի ուղղորդման համակարգին

Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակներում ՍԵՊՖԱ-ն հյուրընկալեց Ֆրանսիայի ՍԵՊՌ կամպուսի, Իտալիայի ԱՊՌՈ Ֆորմացիոնե ուսումնական կենտրոնի, Գյումրու պետական բժշկական քոլեջի, ՀՀ ԿԳՄՍՆ և Աշխատանքի և սոցիալական հար-

ցերի նախարարության ներկայացուցիչներին՝ քննարկելու մասնագիտական կողմնորոշմանն առնչվող հարցերը: ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Ա. Սվաջյանը բացման խոսքում կարևորեց ՄԿՈՒ հաստատությունների ներգրավվածությունը Էրազմուս+ ծրագրերում՝ ընդգծելով, որ IMPROVET_AM ծրագիրը կարևոր դեր ունի մասնագիտական կրթության և ուսուցման որակի բարելավման գործում:

Հանդիպմանը հեռավար կապով միացել էին Ֆրանսիայի Օվերն-Ռոն-Ալպ և Իտալիայի Պիեմոնտե տարածաշրջանների համապատասխան ոլորտի ներկայացուցիչները, ովքեր ներկայացրեցին իրենց երկրների փորձը կարիերայի ուղղորդման համակարգի կառավարման և զարգացման ոլորտում:

Հանդիպումը դարձավ արդյունավետ հարթակ փորձի փոխանակման և նորարարական

մոտեցումների քննարկման համար:

Երկրորդ օրը, ծրագրի եվրոպական գործընկերները ֆրանսիական և իտալական փորձով կիսվեցին ՀՀ ՄԿՈՒ և հանրակրթական հաստատությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվեցին մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ 2 երկրներում իրականացվող աշխատանքները, գործող կարգավորումները, ներկայացվեցին մի շարք ինտերակտիվ և առցանց գործիքներ: Իրականացվեց «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության կրթական ծրագրի բենչմարքինգ՝ հետագայում թվային գործիքների ներդրման նպատակով:

«Նոր հորիզոններ մասնագիտական կրթությանև ուսուցման համար »՝ Նիդերլանդներում

ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը, գործընկերներ ՍԵՊՌ-ի և ԱՊՌՈ Ֆորմացիոնեի ներկայացուցիչների հետ Նիդերլանդների Ամերսֆորտ քաղաքում մասնակցեց EfVET-ի 33-րդ միջազգային համաժողովին: «Gen Z-ի կրթություն. նոր հորիզոններ մասնագիտական կրթության և ուսուցման համար» թեմայով համաժողովը համախմբել էր ՄԿՈՒ ոլորտի շուրջ 350 միջազգային փորձագետների: Համաժողովի շրջանակներում

Գ.Գրիգորյանը հնարավորություն ունեցավ մասնակցելու աշխատարանների, որոնց ընթացքում քննարկվեցին #GenZ սերնդի աշխատաշուկա մուտք գործելու և ապագայի մասնագիտությունների համար անհրաժեշտ հմտությունների հարցերը: Համաժողովի ընթացքում ETF-ի կողմից ներկայացվեց ISATCOVE ՄՈՒՀ-երի ինքնագնահատման գործիքը, որը Հայաստանում առաջին անգամ կիրառվում է ՍԵՊՖԱ-ի կողմից: Մասնագիտական այցերի շրջանակներում հանդիպում և էքսկուրսիա կազմակերպվեց AVENTUS մասնագիտական ուսումնական հաստատությունում, որն առողջապահության ոլորտի մեծ դեպարտամենտ ունի, ինչպես նաև ներկայացվեցին WorldSkills 2024-ի շրջանակներում տեղի ունեցած երիտասարդական ֆորումի արդյունքները, որին Հայաստանից մասնակցում էին ՍԵՊՖԱ-ի «Խոհարարական գործ» մասնագիտության շրջանավարտներ Լևոն Մարտիրոսյանը և Ռոբերտ Հակոբյան

Եվրոպական հարուստ փորձը կարիերայի ուղղորդման ոլորտում

ՍԵՊՖԱ-ի Կարիերայի կենտրոնի պատասխանատու Ա.Ստեփանյանը և ՈԱԱԿ-ի տնօրեն Ռ. Թոփչյանը Բելգրադ քաղաքում մասնակցեցին Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) ՄԿՈՒ որակի ապա-

հովման ֆորումին, որը համախմբել էր հիմնադրամի գործընկերներին՝ քննարկելու կարիերայի ուղղորդման ծառայությունների որակի ապահովման ոլորտում ունեցած իրենց լավագույն փորձը, այն է՝ կարիերայի ուղղորդման ծառայությունների կազմակերպում՝ ինչպես աջակ-

ցել ուսանողներին մասնագիտական կրթության ընտրության և աշխատաշուկայում կողմնորոշվելու հարցում:

Կարևոր թեմաներից էր նաև որակի ապահովման մեխանիզմների մշակումը՝ ինչպես գնահատել և բարելավել ուսումնական հաստատություններում տրվող խորհրդատվական ծառայությունների արդյունավետությունը, աշխատաշուկայի կարիքներին համապատասխանող համակարգերի զարգացումը՝ ինչպես ստեղծել արդյունավետ համագործակցություն կրթության և գործատուների միջև:

Բարձր լեռնային ուղեկցորդ Լիոնել Կոնֆորը կիսվեց իր փորձով

ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի, Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիայի, ՍԵՊՖԱ-ի և ֆրանսիական ԱՖՐԱՏ ընկերության միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակում իրականացված քայլարշավային ուղեկցորդների դասավանդող դառնալու դասընթացի հերթական փուլերի ավարտին մասնակիցները հնարավորություն ստացան կատարելագործել ապագա դասընթացավարների հմտությունները՝ համահունչ միջազգային չափանիշներին, հիմքեր ստեղծել քայլարշավային ուղեկցորդների ազգային հավաստագրման գործընթացի համար: Մասնակիցները խորացրեցին իրենց գիտելիքները լեռնային միջավայրի, օդերևութաբանության և արտակարգ իրավիճակներում առաջին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ: Դասընթացը վարում էր ԱՖՐԱՏ ընկերության դասընթացավար, բարձր լեռնային ուղեկցորդ Լիոնել Կոնֆորը:

Դասընթացի գործնական հատվածը տեղի ունեցավ տեղանքում, որտեղ տեսական գիտելիքները վերածվեցին հմտությունների:

Տեղի ունեցավ WorldSkills-2024 մրցույթի ամփոփիչ միջոցառումը

WorldSkills-2024 մրցույթի ամփոփիչ միջոցառման ընթացքում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից շնորհակալագրեր հանձնվեցին ՍԵՊՖԱ-ի«Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության շրջանավարտ Միրա

Ներսիսյանին, ով մրցույթի ժամանակ արժանացել էր Best of nation մրցանակին, նույն մասնագիտության դասախոսներ Քնարիկ Վարդանյանին, Սոնա Ոսկանյանին, Մարիա Էլմաջյանին, ովքեր ակտիվ գործունեություն են ծավալել մրցույթի նախապատրաստական աշխատանքներում:

Շնորհակալագրերի արժանացան նաև ՍԵՊՖԱ-ի «Խոհարարական գործ» մասնագիտության շրջանավարտներ Լևոն Մարտիրոսյանը և Ռոբերտ Հակոբյանը՝ հայկական պատվիրակությանը սատարելու և WorldSkills-ի շրջանակներում կազմակերպված երիտասարդական ֆորումին ակտիվորեն մասնակցելու համար:

Փորձի փոխանակում. Երևան-Գյումրի

Ատամնատեխնիկական գործ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներն իրենց դասավանդողների ուղեկցությամբ այցելեցին Գյումրու պետական բժշկական քոլեջ: Այցի նպատակն էր իրակա-

նացնել համատեղ դաս «Լրիվ անատամություն, միաձնոտ ատամնաշարվածք» թեմայով: Այս համագործակցությունը ևս մեկ քայլ է դեպի որակյալ կրթության ապահովում և ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացում: Հիշեցնենք, որ ՍԵՊՖԱ-ն համագործակցում է Գյումրու պետական բժշկական քոլեջի հետ Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակում:

ՈՒԽ առաջիկա ծրագրերը՝ տարեսկզբյան նիստի օրակարգում

2024-2025 ուսումնական տարվա Ուսանողական խորհրդի առաջին նիստի օրա-

կարգում էին ՈՒԽ առաջիկա ծրագրերն ու միջոցառումները, տարեկան աշխատանքային պլանի, որակի ապահովման, ուսանողական հանձնաժողովի ձևավորման, ուսուցչի տոնին նվիրված միջոցառման կազմակերպման հարցերի քննարկումը: Ուսումնական տարվա նախորդ կիսամյակում իրականացված հսկայածավալ աշխատանքը գնահատելով բավարար՝ նոր ուստարին սկսելու ենք նոր ու էլ ավելի հետաքրքիր ծրագրերով, մեծամասշտաբ միջոցառումներով և ավելի բարձր որակով,- խոստացան ՈՒԽ անդամները:

Մեր թիմը՝ կարիերայի տոնավաճառին

ՍԵՊՖԱ-ի ուսանողական և դասախոսական ներկայացուցիչները Արմենիա Մարիոթ հյուրանոցում մասնակցեցին Հայկական բարեգործական

ընդհանուր միության (ՀԲԸՄ) «Սովորի՛ր և վաստակի՛ր. Արցախ» ծրագրի շրջանակում Երևանի պետական համալսարանի և Եվրասիա միջազգային համալսարանի՝ Միասնական սոցիալական ծառայության հետ համատեղ կազմակերպած «Կարիերայի նոր հնարավորություններ և հեռանկարներ» խորագրով կարիերայի տոնավաճառին, որին մասնակցեց նաև ՍԵՊՖԱ-ն: Տոնավաճառը նպատակ ուներ աջակցելու ԼՂ-ից բռնի տեղահանվածների սոցիալ-տնտեսական ինտեգրմանը Հայաստանի Հանրապետությունում՝ նպաստելով աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն ու զբաղվածության խնդիրների լուծմանը:

Կամավորության գաղափարը և Էրազմուսյան փորձը՝ մեր ուսանողից

ՍԵՊՖԱ-ի Ուսանողական Խորհրդի նախաձեռնությամբ տեղի ունեցավ աշխատարան, որի ընթացքում ՈՒԽ փոխնախագահ Վահե Գրիգորյանը ներկայացրեց կամավորության գաղափարը և կիսվեց Էրազմուս+ ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկություններով: Ուսանողներին հետաքրքրում էին բազմաթիվ թեմաներ: «Սա փորձ է, որը ոչ միայն կտա ինքնավստահություն, այլ բազմաթիվ հմտություններ, գիտելիքներ: Այդ աշխատանքի շնորհիվ ես հասարակության պիտանի անդամ զգում, իսկ մարդկանց ժպիտը, շնորհակալական հայացքը բավարար է, որ ինքդ քեզնից գոհ լինես ու լավ զգաս»,-վստահեցնում է Վահեն:

Ապագա հրուշակագործները՝ Papaya-ում

Հրուշակեղենի տեխնոլոգիա մասնագիտության առաջին կուրսի ուսանողներն իրենց առաջին այցը կատարեցին մասնագիտական միջավայր: Դասախոս Ա. Ավագյանի ուղեկցությամբ նրանք այցելեցին Papaya հրուշակեղենի խանութ-արտադրամաս՝ ծանոթանալու արտադրական գործընթացին, մասնագիտական նյութերին ու գործիքներին, հնարավորություն ունեցան ծանոթանալու ոլորտի նորագույն միտումներին և պրակտիկ աշխատանքային գործընթացներին: Ուսանողները ակտիվ մասնակցություն ունեցան քննարկումներին, ստանալով իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

Քայլարշավային ուղեկցորդների վերապատրաստում Լոռիում

Հոկտեմբերի 5-6 Լոռիում տեղի ունեցավ քայլարշավային ուղեկցորդների վերապատրաստում Գեղարքունիքի, Սյունիքի և Լոռու մարզերի արշավական ակումբների ներկայացուցիչների համար, որն իրականացվում էր ԱՖՐԱՏ ընկերության կամավորների կողմից: ՍԵՊՖԱ-ի Կարիերայի կենտրոնի պատասխանատու Ա. Ստեփանյանը հանդես եկավ որպես աշխատանքների համակարգող, Ուխ նախագահ Կ. Թաթոսյանը նույնպես ներկա էր վերապատրաստումներին:

Քայլարշավ՝ Աղվերանում

AFRAT ֆրանսիական ընկերության կամավորների և Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիայի ներկայացուցիչների ուղեկցությամբ ՍԵՊՖԱ-ի ուսանողները աշնանը քայլարշավ կատարեցին դեպի Աղվերան: Նրանք սովորեցին՝ ինչպես կողմնորոշվել տեղանքում, ինչպես տարբերակել արահետների նշանները:

Տոնդ շնորհավո՛ր, սիրելի՛ ուսուցիչ

ՍԵՊՖԱ-ի Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Ուսուցչի տոնին նվիրված միջոցառում, որի նպատակն էր արժևորել դասախոսներին՝ ոչ միայն որպես մասնագետներ, այլ նաև որպես անհատականություններ: Միջոցառման ընթացքում ուսանողները ջերմ ու հուզիչ շնորհակալական խոսքեր հղեցին իրենց դասախոսներին՝ ընդգծելով նրանց անփոխարինելի դերը իրենց կրթության և զարգացման գործում:

Համով-հոտով ղափամա

ՍԵՊՖԱ-ն մասնակցեց Երևանի Կենտրոն վարչական շրջանի կողմից կազմակերպված «Համով-հոտով ղափամա» միջոցառմանը: Համտեսելու եկած այցելուներին կենտրոնի ներկայացուցիչները առաջարկում էին նաև տոլմա, հայկական ավանդական գաթա, փախլավա, հալվա և ոչ միայն: Միջոցառման ընթացքում հետաքրքրված այցելուների համար Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվեց մասնագիտական կողմնորոշում:

Ամանորը՝ հայկական և ֆրանսիական գյուղերում

ՍԵՊՖԱ-ի ուսանողները Ամանորը դիմավորեցին հայկական և ֆրանսիական գյուղերում: Էլ ինչ Ամանոր առանց տոնական ճոխ սեղանների, երգ ու պարի ու հյուրասիրության: Ըստ ավանդության՝ Ամանորը Ֆրանսիայում նշում են ընկերների շրջապատում, իսկ Ծննդյան տոները՝ ընտանիքի հետ: Մնում է մաղթել, որ եկող տարին լինի նոր հաջողությունների, գիտելիքի ու ձեռքբերումների տարի: